«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՏԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Հետազոտող ուսուցիչ՝ Լիլիթ Պռոշյան

Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի թիվ 1 հիմն. դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Լիլիթ Չալյան

ԱՐՄԱՎԻՐ- 2023

Բովանդակություն

- **Ներածություն……..3**
- **Գրական ակնարկ……6**
- **Հետազոտական մաս…….14**
- **Եզրակացություն……15**
- **Գրականության ցանկ……..18**

Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»:

Ներածություն

Թեմայի արդիականությունը

Միջառարկայական կապերի օգտագործումը ինքնանպատակ չէ և ոչ էլ կարող է նյութի ուսումնասիրության ընթացքում հիմնական կամ տիրապետող գործոն դառնալ: Այն ըստ էության, միշտ օժանդակ միջոց է և պետք է մնա այդ մակարդակի վրա, օգնի հիմնական նյութի ճիշտ, խորն ու բազմակողմանի յուրացմանը:

Նյութի շուրջ տարվող բացատրությունները երբեք դասի մեջ հիմնական ու տիրապետող չպետք է դառնան, որովհետև դրանք աշակերտների ուշադրությունը կշեղեն գլխավոր նպատակից, և նյութի բովանդակության յուրացման փոխարեն առաջին պլան կմղվի բառերի բացատրությունը, որը, ըստ էության, միայն օժանդակ միջոց է և պետք է օգնի այդ բովանդակության յուրացմանը: Այստեղ ևս գրեթե նույն բանը կկատարվի, եթե միջառարկայական կապերը ճիշտ ու տեղին, չափավոր ու նպատակային չօգտագործվեն, ակամա ապա դրանք կարող են դասի գործընթացի հիմնական մեխ դառնալ և դասի բուն նպատակը երկրորդ պլանի վրա, դարձնել անկարևոր:

Այստեղ կարևորն այն է, որ , առակաները տարրական դասարաններում իրենց մեջ

ներառնում կամ ընդհանրացնում են իրենցով ներկայացնում աշխարհաճանաչողական գիտելիքների ամբողջ համակարգը ևս, այս հանգամանքը ուսուցիչը անպայման պետք է նկատի ունենա և իրականացնի իր աշխատանքի ընթացքում՝ օգտագործելով բոլոր այն աշխարհաճանաչողական գիտելիքների իր իմացական տվյալները, որոնք անհրաժեշտ կլինեն նյութի ուսումնասիրման ընթացքում:

Երեխաների ընդհանուր զարգացումն ապահովելու համար ոչ միայն նրանց մեջ լավ կարդալու, գրելու և խոսելու կարողություններ պետք է ձևավորել, այլև բազմապիսի աշխարհաճանաչողական տեղեկություններ պետք է տալ, սովորեցնել շրջապատող աշխարհում տեսնել ու գնահատել գեղեցիկը, լավն ու բարին և գնալ այդ ճանապարհով, նվիրվել աշխարհի ու մեր կյանքի գեղեցկացմանը: Իսկ դրա համար պետք է բոլոր դասընթացները դարձնել խորապես ճանաչողական և դաստիարակչական, այն պետք է հարստացնել անցած գիտելիքների և կարողությունների անընդհատ կրկնելով, նորի հետ կապելով, շրջանառության մեջ պահելով, որպեսզի աշխարհի մասին երեխաների ստացած առանձին ու անկախ գիտելիքները կապվեն միմյանց հետ, լրացնեն միմյանց, դառնան մի ամբողջություն:

Շատերն են գրում և խոսում միջառարկայական կապերի օգտագործման առավելությունների մասին, տեսական դատողություններ են անում և գործնական առաջարկություններ մշակում, սակայն քաջություն պետք է ունենալ խոստովանելու, որ այս բնագավառում շատ մեծ ձեռքբերումներ առանձնապես տարրական ուսուցման օղակում դեռևս չկան և առանձին ուսումնական առարկաների գծով կոնկրետ մեթոդական հանձնարարություններ դեռևս մշակված չեն: Հետևաբար՝ դասերին միջառարկայական կապերի օգտագործման առումով այսպիսի որոշակի հանձնարարականների մշակումը, անկասկած կնպաստի գործնական աշխատանքում դրա նոր ձևերի ու եղանակների, դրա նոր տարատեսակների մշակման ու կատարելագործման հնարավորությամբ:

Ուսումնասիրվող նյութերի միջև փոխադարձ կապերի ապահովման ժամանակ պահանջի տակ ամենից առաջ պետք է հասկանալ բազմակողմանի կապերի ստեղծումը՝ սկսած արտաքին երևութականից մինչև տրամաբանական, առարկայական կամ մասնագիտական բովանդակության, թեմատիկ և այլ կապերը, որոնք հնարավորություն են տալիս տվյալ նյութը բազմակողմանիորեն օգտագործել, նրանից առավելագույն արդյունք ստանալ: Ուսուցվող նյութը միշտ պետք է թարմ ու անծանոթ լինի, որպեսզի արդեն իմացածի ու նոր սովորելիքի միջև որոշակի տարբերություն դրվի, դրանք առանձնանան ոչ

միայն բաժիններով ու նյութի որոշակի բաժանումներով, այլև շարադրանքի ձևով ու մատուցման եղանակով: Միայն այս դեպքում է, որ աշակերտների ունեցած գիտելիքների ու ձեռքբերած կարողությունների փոխանցման մասին կարող է խոսք լինել, դրա համար անհրաժեշտ պայմաններ կստեղծվեն: Կարևորը այն է, որ այդ կապը կարող է ստեղծել նաև աշակերտները, որովհետև ընդհանուր ֆոնի վրա նյութերի միջև եղած այդ կապն ու փոխադարձ կախվածությունն ավելի ցայտուն են երևում, և կապերի ստեղծումը հեշտանում է: Ամենևին պատահական չէ, որ ուսումնական աշխատանքի այս փուլում աշակերտները կարողանում են ամբողջ թեմայի կամ դասընթացի որևէ բաժնի ընդհանրացնող գծապատկերները կամ կառուցվածքի փոխկապակցվածության գծային մոդելը կազմել: Տարրական դասարանների մայրենիի ընթերցարաններում նյութերը գեղարվեստական ստեղծագործություններ ու գործնական բնույթի հոդվածներ են, որոնց բովանդակությունը մեր կյանքն է իր բազմակողմանիությամբ: Այստեղ բնությունն է իր գույներով, ձայներով, անկրկնելի պատկերներով ու հավերժական թարմ ու առինքնող գեղեցկությամբ:

Ուսուցիչը հստակորեն պետք է պատկերացնի, թե ինչ գիտելիքներ ու կարողություններ ունի իր աշակերտը, ուսուցման նախորդ փուլում ինչ է տվել նրանց և վարպետորեն պետք է կարողանալ վերակենդանացնել, կյանքի ու ակտիվ գործունեության կոչել դրանք և հիմք դարձնել իր ուսումնական աշխատանքի հետագա ծավալման՝ գիտելիքների խորացման ու կարողությունների կատարելագործման համար:

Գրական ակնարկ

<<Ես համոզված եմ, որ առանց հողի արվեստագետ չի եղել: Հողի սիրտը գտնվում է մարդու սրտի մեջ: Ամեն ինչ սրտից է բխում, ամեն ինչ սրտով է սկսվում: Իմ խորհուրդ խորինը եղել է իմ սերը դեպի մայր հողն ու ժողովուրդը: Այդ սերը ես արտահայտել եմ արվեստով, որն իմ հոգին է: Ուրիշ հավատ ու սեր ես չեմ ունեցել: Սիրել եմ, անկեղծ եմ սիրել, ինձ եմ տեսել իմ նկարների մեջ: Իմ տան դուռը միշտ բաց է եղել ու միշտ բաց կլինի, ես էլ եմ միշտ բաց եղել իմ նկարների պես>>:[1]

Տարրական դասարաններում դրվում են բոլոր գիտելիքների ու կարողությունների հիմքերը, երեխաների առջև բացվում են նորանոր փակ դռներ, նրանք աստիճանաբար հաղորդակից են դառնում դարերի ընթացքում մարդկության ստեղծած հսկայական մշակութային ժառանգությանը, ծանոթանում են բնության գաղտնիքներին, հարստանում է նրանց խոսքն ու մտածողությունը, և նրանք հիմնավորապես զարգանում են, նախապատրաստվում գիտելիքների համակարգված դասընթացների ուսումնասիրությանը:

Երեխաների ընդհանուր զարգացումն ապահովելու համար ոչ միայն նրանց մեջ լավ կարդալու, գրելու և խոսելու կարողություններ պետք է ձևավորել, այլև բազմապիսի աշխարհաճանաչողական տեղեկություններ պետք է տալ, սովորեցնել շրջապատող աշխարհում տեսնել ու գնահատել գեղեցիկը, լավն ու բարին և գնալ այդ ճանապարհով, նվիրվել աշխարհի ու մեր կյանքի գեղեցկացմանը: Իսկ դրա համար պետք է մայրենիի դասը դարձնել խորապես ճանաչողական և դաստիարակչական, այն պետք է հարստացնել անցած գիտելիքների և կարողությունների անընդհատ կրկնելով, նորի հետ կապելով, շրջանառության մեջ պահելով, որպեսզի աշխարհի մասին երեխաների ստացած առանձին ու անկախ գիտելիքները կապվեն միմյանց հետ, լրացնեն միմյանց, դառնան մի ամբողջություն:

[1] **https://www.sarian.am/htmls_arm/sarian_utterances.html**

Կրտսեր դպրոցականների գեղագիտական զգացմունքների զարգացմանը մեծապես նպաստում են «Մայրենիի» դասագրքերում զետեղված շատ ստեղծագործություններ՝ հատկապես Հովհ. Թումանյանի «Կանաչ ախպեր», «Գետակը», «Շաղիկների երգը», Ղ. Աղայանի «Աշուն», «Չորս եղանակ», «Այդ ե՞րբ է լինում», «Ձմեռ», Վ. Տերյանի «Գարուն», Ավ. Իսահակյանի «Գարնան օրեր», Աթ. Խնկոյանի «Ծիծեռնակին», Գ. Դոդոխյանի «Ծիծեռնակ» և բազմաթիվ այլ բանաստեղծություններ, որոնցից շատերը երգի են վերածված (որն էլ դյուրին է դարձնում տարրական դասարաններում միջառարկայական կապեր ստեղծելը
գրականության և երաժշտության միջև):

Որպես բնորոշ օրինակ՝ կարող ենք ներկայացնել Հովհաննես Թումանյանի «Կանաչ ախպեր» անզուգական բանաստեղծությունը, որին գեղարվեստական հատուկ երանգ են տալիս մեր կողմից ընդգծված գեղեցիկ ու տարողունակ մակդիրները: Հայ գրականության մեջ ծիծեռնակը դիտվել է որպես գարնան մունետիկ և այդ կապակցությամբ ստեղծվել են բազմաթիվ հիասքանչ բանաստեղծություններ, ինչպես Գ.Դոդոխյանի «Ծիծեռնակ» բանաստեղծությունը, որը 2-րդ դասարանցիները ոչ միայն արտահայտիչ արտասանում են,

այլև երգում (երաժշտ. Կոմիտասի), ստանալով գեղագիտական հաճույք.

Ծիծեռնակ, ծիծեռնակ,

Դու գարնան սիրուն թռչնակ.

Դեպի ու՛ր, ինձ ասա,

Թռչում ես այդպես արագ:

Անդ շինիր քո բույնը

Միջառարկայական կապերը մայրենիի դասերին

Միջառարկայական կապերի օգտագործումն ունի նաև մի այլ շատ կարևոր նշանակություն . այն վաղուց ստացած կամ արդեն ունեցած գիտելիքների փոխանցման, դրանք շրջանառության մեջ դնելու, տարբեր պայմաններում ճիշտ ու տեղին գործադրելու կարողություն է մշակում սովորողների մեջ, որը մարդու համար կարևոր ու գործնական հատկանիշ է դառնում նրա ամբողջ կյանքի համար: Միջառարկայական կապերի օգտագործումը, ըստ էության, շատ բարդ աշխատանք է, և ուսուցչից ու աշակերտներից մեծ վարպետություն, հմտություն ու գործիմացություն է պահանջում: Ուսումնասիրվող նյութերի միջև փոխադարձ կապերի ապահովման ժամանակ պահանջի տակ ամենից առաջ պետք է հասկանալ բազմակողմանի կապերի ստեղծումը՝ սկսած արտաքին երևութականից մինչև տրամաբանական, առարկայական կամ մասնագիտական բովանդակության, թեմատիկ և այլ կապերը, որոնք հնարավորություն են տալիս տվյալ նյութը բազմակողմանիորեն օգտագործել, նրանից առավելագույն արդյունք ստանալ:

Միջառարկայական կապեր գոյություն ունեն հատկապես տեխնոլոգիա, մաթեմատիկա, կերպարվեստ, երաժշտություն առարկաների միջև: Այդ առարկաներից յուրաքանչյուրի ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքները, ունակությունները և հմտությունները լայնորեն կիրառվում են մյուս առարկաների ուսուցման գործընթացում:

Մայրենիի դասերը մեծ առավելություն ու մեծ հնարավորություններ ունեն ոչ միայն այն առումով, որ ամեն ինչի մասին մայրենի լեզվով կարելի է հեշտությամբ բացատրել ու հասկացնել, այլ այն տեսակետից, որ մայենիի դասերին արվեստի տարբեր ձևերի ու դրսևորումների տեղին ու արդյունավետ գործադրումը ոչ մի դժվարություն չի ներկայացնում: Գեղեցիկի աշխարհը թափանցելու այդ կարևոր ու անփոխարինելի միջոցներից մեկն էլ երգն ու **երաժշտությունն են,** որոնք լայնորեն կարող են օգտագործվել մայենիի դասերին, դառնալով այդ դասերի օրգանական բաղադրիչներից մեկը, մայրենիի դասը դարձնել հաճելի, գեղեցիկ, տպավորիչ ու անմոռաց:

Տարրական դասարաններում երեխաները երաժշտության «Երգեցողություն»բաժինը ուսումնասիրելիս անցնում են այնպիսի ստեղծագործություններ, որոնք զուգորդվում և մեկ ամբողջություն են դառնում մայրենիի հետ՝ «Դու մեր դպրոց սիրասուն», «Ողջույն, դպրոց», «Մեր երգն առաջին», «Զանգն է կանչում», «Հնչում է զանգը», «Իմ գիրքը», «Ով ինչ է անում», «Ծափ - ծափ», «Փուչիկ», «Անբախտ փիսոն», «Արցախի մանուկներ», սրանք այն հիմնական թեմաներն են, որոնք մեկտեղվում են երկու առարկաների միջև: Մայրենիի դասաժամերին երեխաները և՛ երգում են ստեղծագործությունը, և՛ սովորում են այն ճիշտ կարդալ, անգիր արտասանել:

Երբ երեխաները այբուբենը անգիր և վարժ կարողանում են արտասանել, ուսուցչի հետ միասին երգում են Կոմիտասի «Այբ, բեն, գիմ» ստեղծագործությունը՝

Այբ, բեն, գիմ
Այբ, բեն, գիմ,
Դա, եչ, զա,
Այբ, բեն, գիմ,
Դա, եչ, զա,
Դա, եչ, զա...

Տարրական դասարանների մայրենիի դասագրքերում բազմաթիվ ու բազմապիսի նյութեր կան աշխարհի մասին՝ նրա տարածքների կամ մակերևույթի ձևերի, նրա գեղեցիկ հատվածների, տարվա տարբեր եղանակների, նրա բուսական ու կենդանական աշխարհի, նրա քաղաքների, պետությունների ու աշխարհամասերի մասին, որոնց մասին գիտելիքներ ստանում ենք **ես և շրջակա աշխարհը** առարկայից:

Ես և շրջակա աշխարհը առարկայից երեխաները երրորդ դասարանում ծանոթանում են տարվա եղանակներին՝ Ղ. Աղայանի «Այդ ե՞րբ է լինում» ստեղծագործության միջոցով, իսկ մայրենիի երկրորդ դասարանի դասաժամերին՝ «Ամիսները և չորս եղանակները» թեմայի շնորհիվ որոշակի գիտելիքներ ունեն տարվա եղանակների մասին:

Մայրենիի դասերին բնության ու բնագիտության տվյալների օգտագործման պահանջը գրեթե միշտ էլ եղել է, որովհետև տարրական դասարաններում մայրենին իր մեջ ամփոփում է բոլոր մյուս գիտությունների տվյալները, և դա ոչ միայն մեծապես նպաստում է այդ գիտությունների վերաբերյալ տարրական տեղեկությունների հաղորդմանը, այլև, որ ավելի կարևոր է, մայրենիի ուսուցմանը թե՛ բովանդակության հասկացությունների ու

գիտելիքների ձևավորման և թե՛ բառապաշարի հարստացման առումով:

Կերպարվեստը արվեստի հրաշալի ու ինքնատիպ դրսևորումներից մեկն է, որին երեխաները պետք է հաղորդակից դառնան դեռևս կրտսեր դպրոցական տարիներից: Նկարը տարրական դասարանների բոլոր դասագրքերի կարևոր ու առանձնահատուկ բաղադրիչներց մեկն է: Նկարները լայնորեն օգտագործվում են ինչպես այբբենարաններում, որոնց ծավալի ճնշող մեծամասնությունը կազմում են նկարները, այնպես էլ մայրենիի դասագրքերում, որոնցում նույնպես նկարները վճռական տեղ ու դեր ունեն:

Տարրական դասարաններում մայրենիի դասաժամերին երեխաները ծանոթանում են Մարտիրոս Սարյանի կյանքին և գործունեությանը, իսկ կերպարվեստի դասերին նկարում են Սարյանի գլուխգործոցներից մեկը՝ հիմք ընդունելով մայրենիի դասին ստացած գիտելիքները:

Անդրադարձ կապ ուսուցման գործընթացում

Շրջապատի աշխարհը մարդուն ներկայանում է իր դիալեկտիկական միասնության մեջ, փոխադարձ կապերով ու կախվածությամբ, պատճառահետևանքային առնչակցություններով: Ուսումնական գործընթացն աշխարհի ճանաչումն է իր այդ կապերի ու կախվածության մեջ: Միջառարկայական կապերի օգտագործումն ունի շատ կարևոր նշանակություն. այն վաղուց ստացած կամ արդեն ունեցած գիտելիքների փոխանցման, դրանք շրջանառության մեջ դնելու, տարբեր պայմաններում ճիշտ ու տեղին գործադրելու կարողություն է մշակում սովորողների մեջ, որը մարդու համար կարևոր ու գործնական հատկանիշ է դառնում նրա ամբողջ կյանքի համար:

Միջառարկայական կապերի օգտագործումը, ըստ էության շատ բարդ աշխատանք է ուսուցչից ու աշակերտներից մեծ վարպետություն, հմտություն ու գործիմացություն է պահանջում: Սկզբնական կամ միջանկյալ օղակ կարող է լինել ներառարկայական կապերի օգտագործումը, որը թե՛ ուսուցիչների և թե՛ աշակերտների համար անհամեմատ ավելի պարզ, հեշտ ու մատչելի աշխատանք է, և հաջողությամբ կարող է գործադրվել բոլորի կողմից, բոլոր պայմաններում ու շոշափելի արդյունք տալ: Գիտելիքների փոխանցման և ներառարկայական կապերի ապահովման տեսակետից հատուկ ուշադրություն պետք է դարձնել միևնույն առարկայի տարբեր տարիների դասընթացների կամ ամբողջական դասընթացի տարբեր հատվածների միջև փոխադարձ կապերի ապահովման վրա՝ որպես դասընթացի ամբողջացման անցածը հիշելու և նորի հետ կապելու, սովորածը գործադրելու և գործածության ոլորտում պահելու անփոխարինելի միջոցի:

Երեխան մայրենի լեզվի կրողն է: Նա լավ թե վատ, ճիշտ թե սխալ անընդհատ հաղորդակցվում է, ճանաչում ինքն իրեն, արտահայտում իր մտքերը, փորձում հասկանալ ու հասկանալի լինել: Մայրենի լեզվի ուսուցում ասվածը պայմանական է, քանզի մարդն այն յուրացնում է ամբողջ կյանքի ընթացքում: Երեխան ծնված օրվանից արդեն կրում է մայրենի լեզուն: Կրտսեր դպրոցի խնդիրն է դառնում օգնել երեխային գրավոր և բանավոր խոսքը ճիշտ ձևակերպել, կարողանալ արտահայտել իր հույզերը, զգացմունքները ու հաղորդակցվել: Մայրենի լեզվի ուսուցումը, որպես ուսուցման հիմնական լեզու, անընդհատ է ու սերտորեն կապված է սովորողի ամենօրյա գործունեության հետ: Այն պետք է նպաստի սովորողի՝ բնականոն, անկաշկանդ, ստեղծագործող, տրամաբանող, ազատ արժեհամակարգի ձևավորմանը: **Մայրենին ուղղված է՝**

- սովորողի ինքնաարտահայտմանը, ինքնադրսևորմանը.
- սեփական միտքը բանավոր և գրավոր ձևակերպելուն և արտահայտելուն.
- սովորողի ստեղծագործական մտքի զարգացմանը:

Կերպարվեստը տարրական դասարանների մայրենի լեզվի դասերին, /միջառրկայական կապ/

Տարրական ուսուցման մեթոդիկայում հանգամանորեն մշակված չէ կերպարվեստի տարրերի օգտագործման հարցը որպես երեխաների ընդհանուր մտավոր զարգացմանը մեծապես նպաստող կարևոր ու անփոխարինելի միջոցի՝ ոչ միայն դիդակտիկական կամ ուսուցումը զվնական դարձնելու, այլև միջառարկայական կապերի արդյունավետ ու

նպատակային օգտագործման առումով: Նկարը տարրական դասարանների բոլոր դասագրքերի կարևոր ու առանձնահատուկ բաղադրիչներց մեկն է:

Նկարները լայնորեն օգտագործվում են ինչպես այբբենարաններում, որոնց ծավալի ճնշող մեծամասնությունը կազմում են նկարները, այնպես էլ մայրենիի ընթերցարաններում ու դասագրքերում, որոնցում նույնպես նկարները վճռական տեղ ու դեր ունեն:

Դասագրքերում օգտագործվող նկարները լինում են երեք տեսակ՝ առարկայական կամ նկար-բառեր, նկար-նախադասություններ և թեմատիկ նկարներ կամ նկար-պատմություններ, որոնք երբեմն մեկ, իսկ երբեմն էլ մի քանի նկարներով են արտահայտված: Ամենից առաջ ու ամենից շատ դասագրքերում տեղ գտած նկարները դրանց գեղարվեստական ձևավորման նպատակ են հետապնդում, իսկ ապա նաև ճանաչողական, այս կամ այն տեղեկության, նյութի ու գաղափարի հաղորդման: Այս առումով դրանց հիմնական խնդիրը երեխաների մեջ գեղարվեստական ճաշակի մշակումը, գեղագիտական դաստիարակության կարևոր պահանջի իրականացումը պետք է լինի:

Այբբենարանի յուրաքանչյուր նկար ուսուցիչը պետք է հնարավորին չափ մանրամասնորեն ու գեղեցիկ պատմի, որպեսզի նկարը կարդալու կենդանի օրինակ տա, այն դարձնի մտածողությունն ու խոսքը հարստացնելու միջոց: Այբբենարաններում նկարները հիմնականում ուսուցվելիք նյութի հաղորդման ֆունկցիա ունեն, դրանք կարևոր ու անփոխարինելի միջոց են ուսուցողական ու դաստիարակչական նյութի առաջացման համար, քանի որ բառերով այդ ամենը հաղորդելու հնարավորություն չկա ինչպես կարդալու կարողության բացակայության կամ դեռևս շատ թույլ ու անզարգացած լինելու, այնպես էլ սահմանափակ քանակությամբ տառեր ու բառեր շրջանառության մեջ դրած լինելու պատճառով:

Կերպարվեստի նպատակն է՝

- Աշակերտի ընդգրկումը ստեղծագործական և մեկնաբանական գործունեության մեջ և այս ճանապարհով նրա մոտ գեղեցիկը զգալու և պատկերելու ունակության զարգացումը:
- Արվեստի նմուշներն ընկալելու ունակության ձևավորումը և այդ հողի վրա արվեստի նկատմամբ մշտական հետաքրքրության և սիրո սերմանումը:
- Արվեստի համընդհանուր լեզվի ուսանումը և դրա միջոցով ազգային և համաշխարհային մշակութային արժեքներին հաղորդակցությունը, աշխարհի միասնականության զգացման ձևավորումը:

- Շրջակա միջավայրի գեղագիտական ընկալման և կարգավորման կարողությունների և հմտությունների մշակմանը:
- Ստեղծագործական գործունեության տեխնիկական միջոցների իրապետումը և աշխատանքային կարողությունների և հմտությունների ձևավորումը:

Հետազոտական մաս

/ Հետազոտության օբյեկտը ՝ 4-րդ դասարանի աշակերտներ

- **Առարկան**՝ Մայրենի
- **Դասի թեման՝ ,,** Սայրանի նկարներում շողշողում է Հայաստանի հավերժությունը**,,**

- **Հետազոտության նպատակը՝** պարզել միջառարկայական կապերի կիառման ազդեցությունը սովորողների մետաճանաչողության վրա:
- **Հետազոտության գործիքը՝** հարց ու պատասխան

Հետազոտությունը անցկացրել եմ 4-րդ դասարանում, որտեղ սովորում էին 32 աշակերտ՝ 20տղա, 12 աղջիկ:

Պարզելու համար միջառարկայական կապերի կիառման ազդեցությունը սովորողների մետաճանաչողության վրա հետազոտությունը անցկացել եմ 2 փուլով:

<u>1 -ին օր/1-ին փուլ/</u> դասապրոցեսը անցկացրել եմ առանց միջառակայական կապերի: Ներածական մասում խոսել ենք նախ Մ. Սարյանի մասին ունեցած իրենց տեղեկությունների մասին: Քննարկել ենք, կարդացել բնագիրը, բացատրել նորածանոթ բառերը, բնութագրել ենք Մ. Սարյանին: Հետո առաջարկել եմ վերլուծել բնագիրը ՝ իրենց պատկերացրած գույներով:

2-րդ օրը/ 2-րդ փուլ/- կիրառել եմ միջառակայակ կապ /մայրենի- կեպարվեստ/: Դասը սկսել

ենք Մ. Սարյանի մասին տեսանյութի դիտմամբ: Այնուհետև ցուցադրել եմ Մ. Սարյանի նկարներից և առաջարկել հորինել փոքրիկ պատմություն նկարի շուրջ: Որից հետո խոսել ենք Մ. Սարյանի կատարած հայրենանվեր գործի մասին, թե նա ինչպես ներկայացրեց սենսացիոն ցուցահանդես ժամանակի խոշոր ցուցահանդեսներում՝ Մոսկվայում, Պետերբուգում, Կիևում , Լոնդոնում և այլուր: Ինչպես իր նկարների շարքով գրավեց բազմաթիվ երկրների ուշադրությունը և ինչպես նրանով ճանաչեցին մեզ՝ հայերիս: Հետո դիտեցինք նրա կատարած գործերից / Հեքիաթներ և Երազներ/ : Երեխաները եկան այն եզրահանգման, որ Սարյանի նկարներում գերիշխում է ոսկեգույնը: Մտովի ճամփորդեցինք անցյալ:Այս ամենից հետ առաջարկեցի մեկ անգամ ևս կարդալ բնագիրը, հենց այստեղից էլ արդեն նկատվեց առոգանական, ելևէջային , հուզական երանգներ երեխաների ընթերցանության մեջ: Հետո հարցրեցի թե, ինչ գույնով կբնութագրեն բնագիրը, լսեցի ամենտարբեր կարծիքներ և երևակայական բացատրություններ: Վերջում առաջարկեցի նկարել դասը և նկարը ներկայացնելով՝ վերարտադրել բնագիրը: Հարցին, թե որ օրվա դասն էր ավելի հետաքրքիր ու հիշարժան, երեխաների գերակշիռ մասը նախընտրեց երկրորդ օրվա դասը:

Այսպիսով , ունեցանք հետևյալ արդյունքները՝

1 -ին օր-

Ակտիվություն ----------50%

Երևակայություն ----------20%

Հիշողություն ----------30%

2- րդ օ ր

Ակտիվություն ----------90%

Երևակայություն ----------80%

Հիշողություն ----------80%

Եզրակացություններ

Միջառարկայական կապերի օգտագործումը, ըստ էության շատ բարդ աշխատանք է. ուսուցչից ու աշակերտներից մեծ վարպետություն, հմտություն ու գործիմացություն է պահանջում: Հենց այդ է պատճառը, որ, չնայած այս հարցի մասին բավականաչափ շատ է խոսվել ու գրվել, սակայն վերջնահաշվում դեռևս շոշափելի քիչ բան կա: Եվ այլ կերպ էլ չէր կարող լինել: Մջառարկայական կապերի օգտագործումը դասապրոցոսում օգնում է նյութի հեշտ, դյուրին ընկալմանը, զարգացնում է երեխաների ուշադրությունը, երևակայությունը, նպաստում է նյութի հիմնական բովանդակության ավելի արագ ընկալմանը և եկաատև հիշողություն փոխանցմանը:

Միջառարկայական կապերի օգտագործումը հետևանք է, այն ըստ էության այդ ուղությամբ տարվող բազմաթիվ ու բազմապիսի աշխատանքների վերջնական, բարձրագույն արդյունքը պետք է լինի: Նրանից չէ, որ պետք է սկսել, այլ դրան պետք է հասնել մինչ այդ շատ ու շատ խոչընդոտներ ու դժվարություններ հաղթահարելով նույն նպատակին ծառայող այլ աշխատանքներ կատարելով, որոնք ձևով ու բովանդակությամբ շատ ավելի պարզ են, մատչելի և հնարավորություն կտան քայլ առ քայլ մոտենալու այդ դժվարին խնդրի լուծմանը:

Երեխաների ընդհանուր զարգացումն ապահովելու համար ոչ միայն նրանց մեջ լավ կարդալու, գրելու և խոսելու կարողություններ պետք է ձևավորել, այլև բազմապիսի աշխարհաճանաչողական տեղեկություններ պետք է տալ, սովորեցնել շրջապատող աշխարհում տեսնել ու գնահատել գեղեցիկը, լավն ու բարին և գնալ այդ ճանապարհով, նվիրվել աշխարհի ու մեր կյանքի գեղեցկացմանը: Իսկ դրա համար պետք է դասեր դարձնել խորապես ճանաչողական և դաստիարակչական, այն պետք է հարստացնել անցած գիտելիքների և կարողությունների անընդհատ կրկնելով, նորի հետ կապելով, շրջանառության մեջ պահելով, որպեսզի աշխարհի մասին երեխաների ստացած առանձին ու անկախ գիտելիքները կապվեն միմյանց հետ, լրացնեն միմյանց, դառնան մի ամբողջություն: Ահա այստեղ է, որ ուսուցչին օգնության կարող են գալ միջառարկայական կապերը և կնպաստեն դասի հետաքրքրական, աշխույժ ու ճանաչողական դարձնելուն:

Գիտելիքների փոխանցման և ներառարկայական կապերի ապահովման տեսակետից հատուկ ուշադրություն պետք է դարձնել միևնույն առարկայի տարբեր տարիների դասընթացների կամ ամբողջական դասընթացի տարբեր հատվածների միջև փոխադարձ կապերի ապահովման վրա՝ որպես դասընթացի ամբողջացման անցածը հիշելու և նորի հետ կապելու, սովորածը գործադրելու և գործածության ոլորտում պահելու անփոխարինելի միջոցի:

Ուսումնասիրվող նյութերի միջև առարկայական, տրամաբանական բովանդակության, թեմատիկ, ճանաչողական, դաստիարակչական ու լեզվական կապերի ստեղծման աշխատանքը պետք է սկսել դեռևս մշակման համար ընտրված նյութի շուրջ անցկացվող նախապատրաստական զրույցից և ավարտել նյութի թեմայի կամ նյութերի թեմատիկ խմբի ամփոփումով:

Ամենից առաջ պետք է նշել, որ մեզանում գիտելիքների ու կարողությունների փոխանցման հնարավորությունը, որպես ուսումնական աշխատանքի գիտական կազմակերպման կարևոր ու անհրաժեշտ գործոն, գրեթե հաշվի չի առնվում: Եթե այդ ուղղությամբ որևէ բան կատարվում է, ապա հիմնականում կատարվում է ինքնաբերաբար, առանց այդ գործընթացի էության, նրա հոգեբանական-մանկավարժական ու մեթոդական հնարավորությունների հաշվառման կամ գիտակցման:

Այժմ չկա ուսումնական որևէ առարկա, որ դասավանդվի մյուս ուսումնական առարկաներից ու գիտություններից առանձնացված, ներփակ ձևով: Բոլոր գիտություններն էլ կապված են միմյանց հետ և փոխադարձ ազդեցությունների ու ներթափանցումների ռեալ ու ներթաքուն հնարավորություններ ունեն, որոնք ուսուցման գործընթացում անպայման պետք է օգտագործվեն: Մայրենիի ուսուցումն այդ տեսակետից ոչ միայն բացառություն չի կազմում, այլև փոխադարձ ներթափանցումների ավելի լայն հնարավորություններ ու պայմաններ ունի:

Գրականության ցանկ

1. Աշոտ Տեր-Գրիգորյան «Միջառարկայական կապերը տարրական դպրոցում» Ե. 1986թ.

2. Ռ. Խարազյան «Աշակերտների բառապաշարի հարստացումը տարրական դասարաններում» Ե.2003թ.

3.Ռ. Խարազյան «Հայոց լեզու և դասավանդման մեթոդիկա» Ե.2016թ.

4.Ջ.Գյուլամիրյան «Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա» Ե. 2015թ.

5.Մայրենիի դասագրքեր

6. Նախաշավիղ ամսագրեր

7.Տարրական դասարանների դասագրքեր:

8 https://www.sarian.am/

9. [1] **https://www.sarian.am/htmls_arm/sarian_utterances.html**